ԼԱԶԻՍՏԱՆԻ ԽՆԴՐՈՒՄ ՀԱՅ-ՎՐԱՑԱԿԱՆ ՏԱՐԱԿԱՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԼՈՆԴՈՆԻ ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎՈՒՄ

(1920 թ. փետրվար-մարտ)

Հայաստանի առաջին հանրապետության արտաքին քաղաքական գլխավոր գերակայություններից մեկը ծովային ելքի ապահովումն էր: Այդ նպատակի իրականացման համար իրական հնարավորություն ստեղծվեց Առաջին աշխարհամարտի ավարտից հետո: Փարիզում հրավիրված խաղաղության վեհաժողովում հայկական պատվիրակություններն առաջ են քաշում նաև այս հարցը:

Սակայն շուտով ակնհայտ է դառնում, որ Անգլիան և Ֆրանսիան Հայաստանի դեպի Սև ծով ելք ունենալու հարցի շուրջ լուրջ տարակարծություններ ունեն, հատկապես, երբ քննարկվում էր Տրապիզոնի հարցը: Այս տարբերակին դեմ էր Ֆրանսիան: Տրապիզոնը Հայաստանին հանձնելուն դեմ արտահայտվեցին նաև Պոնտոսի հույները: Ֆրանսիացիները առաջարկում էին Հայաստանին ծովային ելք տրամադրել Լազիստանով՝ Ռիզեի կամ Աթինեի նավահանգստով, որին անգլիացիները համաձայնեցին միայն 1920 թ. սկզբներին, երբ հրաժարվեցին մերձսևծովյան տարածքներում իրենց հովանու ներքո խամաճիկ պետություն ստեղծելու ծրագրից: Այս առաջարկին էլ կտրուկ դեմ արտահայտվեցին վրացիները[1]:

Հայ-վրացական հարաբերություններում պակաս հետաքրքրական չէ նաև Լազիստանի խնդիրը, որը ծագեց 1920 թ. սկզբներին, երբ Հայաստանի դեպի ծով ելքի հարցը քննարկելիս հնարավոր տարբերակներից մեկը դիտվում էր հենց այդ տարածաշրջանը:

Լազիստանը (Լազիկա) Տրապիզոնի վիլայեթի Տրապիզոնից դեպի արևելք Սև ծովի առափնյա գավառներից մեկն էր, որը ձգվում էր մոտավորապես Ռիզե-Աթինե-Խոպա գծով: Ինչպես տեսանք Լազիստանի վրա հավակնություններ ունեին անգլիացիները, հույները, հայերը, վրացիները և, իհարկե, քեմալականները: Անգլիացինե-

---

[1] Տե՛ս Թորոսյան Շ., Դեպի ծով ելքի հարցը և հայ-վրացական տարակարծությունները Սան Ռեմոյի խորհրդաժողովում, «21-րդ դար», 2013, թիվ 4 (50), էջ 135–136:

րի հավակնությունները դադարեցին 1920 թ. գարնանը, երբ նրանք վերջնականապես հրաժարվեցին Աջարիայի և Լազիստանի տարածքում պետություն ստեղծելու ծրագրից: Հույներն հավակնությունները ի հայտ եկան դեռևս 1919 թ. սկզբներին, երբ նրանք առաջ քաշեցին Պոնտոսի հանրապետություն ստեղծելու ծրագիրը: Հույները իրենց պահանջը հիմնավորում էին պատմական իրավունքով և տարածաշրջանի ազգագրական կազմով: Այդ նույն ժամանակ վրացիները Փարիզի վեհաժողովում հանդես եկան հայտարարությամբ՝ հիմնավորելով իրենց իրավունքները Լազիստանի նկատմամբ, իսկ մի փոքր անց այդ ամենը շարադրեցին նաև վեհաժողովին ներկայացրած հուշագրում[2]:

Հայաստանի ծովային սահմանի խնդրում անգլո-ֆրանսիական հակասություններն առավել սրվեցին Գերագույն խորհրդի 1920 թ. փետրվարի 12-ից ապրիլի 10-ը Թուրքիայի հետ հաշտության պայմանագրի նախագծի քննարկման նպատակով Լոնդոնում ընթացող խորհրդաժողովում: Խորհրդաժողովը հայկական խնդիրներին անդրադարձավ փետրվարի 16-ի նիստում, որտեղ Ֆրանսիայի ներկայացուցիչ Ֆիլիպ Բերթըլոն դեմ արտահայտվեց Տրապիզոնը Հայաստանին տրամադրելուն՝ նշելով, որ Հայաստանը կարող է արտոնություններ ունենալ Կարս-Բաթում կառուցվելիք երկաթգծում, Կիլիկիայով՝ մինչև Ալեքսանդրետի նավահանգիստը և Փոքր Ասիայով՝ երգրումից մինչև Կոստանդնուպոլիս[3]: Իտալիայի վարչապետ Նիտտին համաձայնվում է Բերթըլոյի հետ, և Լլոյդ Ջորջը, ստեղծված ներհակությունները շտկելու նպատակով, առաջարկում է ստեղծել Հայաստանի սահմանները որոշող հանձնաժողով: Այդ հանձնաժողովը ստեղծվեց հաջորդ օրը՝ փետրվարի 17-ին, որը Հայաստանի սահմանների հետ կապված այլ հարցերի շարքում պետք է քննարկեր նաև Բաթումի և Լազիստանի գավառի ապագա կարգավիճակին վերաբերվող հարցերը[4]: Այս հանձնաժողովի մեջ էին մտնում Անգլիան՝ ներկայացուցիչներ Ռոբերտ Վանսիտտարտը

---

[2] Авалов З., Независимость Грузии в международной политике 1918–1921 гг., Париж, 1924, с. 255.

[3] Տե՛ս Ованнисян Ричард Г., Международные отношения Республики Армения 1918–1920 гг., Ереван, 2007, էջ 428–430:

[4] Տե՛ս նույն տեղում, էջ 430:

կարգավիճակին վերաբերվող հարցերը[4]: Այս հանձնաժողովի մեջ էին մտնում Անգլիան՝ ներկայացուցիչներ Ռոբերտ Վանսիտտարտը և գնդապետ Գրիբենը, Ֆրանսիան՝ ներկայացուցիչներ Կամերերը և գնդապետ Շարդինին, Իտալիան՝ ներկայացուցիչներ Գալլին և գնդապետ Գաստոլդին և Ճապոնիան՝ ներկայացուցիչներ Իսաբուրո Գոշիդան և լեյտենանտ Կիյուշի Աննոն[5]: Հանձնաժողովի փետրվարի 21-ի նիստում, որտեղ հիմնականում քննարկվեցին Տրապիզոնին և Լազիստանին առնչվող խնդիրները, հայ պատվիրակներ Պողոս Նուբարը, Ավետիս Ահարոնյանը և գեներալ Գաբրիել Ղորդանյանը ներկայացրեցին Հայաստանի սահմանների վերաբերյալ գրավոր պահանջագիր և քարտեզը, որը կազմել էր գեներալ Ղորդանյանը: Այդ քարտեզը, ըստ որի հայ-թուրքական սահմանն անցնում էր Տրապիզոնից, Երզնկայից, Դերսիմից և Խարբերդից արևմուտք, հարուցեց Ֆրանսիայի ներկայացուցիչ, ազգությամբ հրեա Կամերերի խիստ դժգոհությունը: Իսկ Անգլիայի ներկայացուցիչ Վանսիտտարտին հետաքրքրում էր այն հարցը, թե եթե Տրապիզոնը տրվի հայերին, ապա նրանք կպահանջե՞ն նաև Լազիստանը: Ահարոնյանը վճռականապես «այո» է ասում՝ գիտակցելով, որ այդ պատասխանը կարող է դուր չգալ անգլիացուն[6]: Հայ պատվիրակները, ելնելով Տրապիզոնի շուրջ հույների բարձրացրած աղմուկից և Ֆրանսիայի դիրքորոշումից, վախենում էին, որ Տրապիզոնը իրենց չտալու դեպքում Հայաստանը կզրկվի ծովային ելքից, ուստի՝ պահանջելով երկուսն էլ, հույս ունեին, որ կստանան դրանցից մեկը: Սակայն Վանսիտտարտը, առաջնորդվելով ուրիշի ձեռքով կրակից շագանակ հանելու փորձված քաղաքականությամբ, ընդդիմանում է, թե լազերը վրացական ծագում ունեն և վրացիները պահանջում են Լազիստանը: Ահարոնյանը հակադարձում է նրան՝ նշելով, որ Լազիստանն իրենց պետք է ոչ թե որպես տարածք, այլ որպես ելք դեպի ծով՝ Հայաստանի կենսական կարիքներն ապահովելու համար, ապա ավելացնում, որ վրացիները տիրապետում են

---

[4] Տես նույն տեղում, էջ 430:

[5] Տես Ահարոնյան Ա., Սարդարապատից մինչև Սևր և Լոզան: Քաղաքական օրագիր, Երևան, 2001, էջ 60, նաև՝ Авалов З., Независимость Грузии..., с. 254.

[6] Տես Ահարոնյան Ա., նշվ. աշխ., էջ 61:

300.000 հայերի վրա, իսկ իրենք հավակնում են ընդամենը 50–60 հազար լազերի, որոնց վրացական ծագումը նույնիսկ ապացուցված չէ[7]:

Այստեղ հատկանշականն այն է, որ դեռևս Գերագույն խորհրդի փետրվարի 16-ի նիստում Անգլիայի արտգործնախարար լորդ Քերզոնը հայտարարել էր, որ անգլիական զինվորական իշխանությունները խորհուրդ չեն տալիս էրզրումը մտցնել Հայաստանի կազմի մեջ, քանի որ դա մշտական սպառնալիք կներկայացնի Հայաստանի համար՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ նրան հավակնում են թուրքերը: Հետևաբար, ըստ Քերզոնի, դեպի Սև ծով ելք հայերին կարելի է շնորհել Լազիստանով, որը, սակայն, կարելի է հիմնավորել միայն տնտեսական տեսանկյունից, քանի որ այդտեղի բնակիչները վրացական ծագմամբ մուսուլմաններ են[8]:

Ահա թե ինչու էր հակադարձում Վանսիտտարտը հայ պատվիրակներին՝ մատնանշելով վրացիների հավակնությունները: Եվ քանի որ թե՛ Լազիստանի և թե՛ Բաթումի խնդիրները շատ կարևոր էին հայ-վրացական սահմանազատման հարցը լուծելու առումով, ուստի 1920 թ. փետրվարի 25-ին, այսինքն՝ հայ պատվիրակների հետ հանդիպումից չորս օր անց, վրացական պատվիրակությունը հրավիրվում է Հայաստանի սահմանները որոշող հանձնաժողով՝ այդ հարցերը պարզաբանելու համար[9]: Ըստ վրացական պատվիրակության, իրենց հավակնությունները Լազիստանի, ինչպես նաև էրզրումի նահանգի՝ դրան հարող Բայբուրդի գավառի որոշ մասերի վրա, որոնք ըստ նրանց հիմնավորվում էին որոշակի պատմական և ազգագրական տվյալներով, ինչպես նաև վրաց հանրության մեջ տարածված հայացքներով, ի սկզբանե հանդիսանում էին պայմանական՝ պայմանավորված լինելով Արևմտյան Հայաստանում թուրքական իշխանության վերացումից և նոր Հայաստանի ստեղծումից: Վրացիների դիտարկմամբ, եթե նախկին Օսմանյան կայսրության որոշակի տարածքներ ենթակա են վերաբաժանման, և հայ-վրացական սահմանը պետք է անցնի Ճորոխի ավազանով և Սև

---

[7] Տես նույն տեղում, էջ 62:
[8] Տես Ованнисян Ричард Г., Международные отношения..., էջ 429.:
[9] Տես Թորոսյան Շ., նշվ. աշխ., էջ 137:

ծովի առափնյա մուսուլմանական նահանգների տարածքներով, ապա, բնականաբար, Վրաստանը պետք է պահանջի Լազիստանը, որը Բաթումի ծովափի ուղղակի շարունակությունն է՝ թեկուզ և ուժգին թրքացված, բայց արյամբ և լեզվով վրացիներին մոտ կանգնած բնակչությամբ[10]: Այստեղ հատկանշականն այն է, որ վրացիները պատրաստ էին չքննարկել Լազիստանի հարցը, եթե այն մնալու էր Թուրքիային, իսկ հույների և հատկապես հայերի պարագայում կենաց ու մահու պայքար էին մղում:

Վրացիների անհանգստությունը պայմանավորված էր նաև նրանով, որ այդ օրերին «էխո դե-Պարի» թերթի թղթակիցը Լոնդոնից հաղորդել էր, թե հաշտության կոնֆերանսը նախատեսում է Թուրքիան բաժանել 9 մասի, որոնցից մեկը Լազիստանի հանրապետությունն է՝ առանց Տրապիզոնի, որը հատուկ պայմաններով պետք է կապվի Հայաստանի հետ[11]:

Հանձնաժողովում նախագահող Ֆրանսիայի ներկայացուցիչ Կամերերը վրացական պատվիրակության ներկայացուցիչ Զուրաբ Ավալովի վերը բերված փաստարկները բավականաչափ հիմնավոր է համարում, սակայն, անուղղակի հակադրվելով Վանսիտտարտին, նշում է, որ լազերը բոլորովին էլ ցանկություն չեն հայտնել միանալ Վրաստանին, և որ, օրինակ, 1918 թ. թուրքերը Բաթումը գրավել են հենց լազերի օգնությամբ: Ավալովը դա բացատրում է նրանով, որ քանի դեռ այդ երկրամասում պայքար էր գնում ռուսական և Օսմանյան կայսրությունների միջև, ոչ միայն լազերի, այլ նաև նախկին Ռուսական Վրաստանի մուսուլմանների համակրանքը եղել է իրենց հավատակիցների կողմը: Բայց այժմ, երբ մեծ տերությունները որոշել են ստեղծել անկախ Հայաստան և Թուրքիայի իշխանությունն իր նախկին տիրույթների այդ մասի վրա չի պահպանվելու, արդարացի հարց է առաջանում՝ ու՞ր տանել լազերին, կամ նրանք ու՞ր են նախընտրում գնալ՝ դեպի անկախ Վրաստա՞ն, թե՞՝ Հայաստան: Եթե խնդիրը այդպես դրվի, նշանակում է այն արդեն լուծված է[12]: Ինչպես տեսնում ենք, վրացական պատվիրակությունը բավա-

---

[10] Авалов З., Независимость Грузии..., с. 255.
[11] ՀԱԱ, ֆ. 275, ց. 5, գ. 217, թ. 28.
[12] Տես Авалов З., Независимость Грузии..., с. 255–256.

կանաչափ վստահ էր Լազիստանի հարցում: Ինչ խոսք, այդ վստահությունն ավելի շատ արհեստական էր՝ տպավորություն գործելու համար և հեռու էր օբյեկտիվ իրականությունից, ինչի մասին ակնարկել էր Կամերերը հանձնաժողովի նիստում:

Իրականում վրացիներն այնքան էլ վստահ չէին լազերի հարցում: Այդ մասին է վկայում վրաց սոցիալ-ֆեդերալիստների օրգան «Սախալխո Սաքմե» թերթի 1920 թ. ապրիլի վերջերի հետևյալ հրապարակումը. «...Մահմեդական վրացիները և նաև քրիստոնյա վրացիները պետք է ցույց տան աշխարհին, որ իրենք չեն ուզում վիրավորված լինել և հիմարի անուն վաստակել: Մենք դեմ չենք, որ Հայաստանին դեպի ծով ելք տրվի, բայց ոչ Վրաստանի հաշվին: Պետք է էմիսարներ ուղարկել Լազիստան, որպեսզի բացատրեն ժողովրդին, թե իրենց համար ինչ դժբախտություն կլինի, եթե բավարարվեն հայ և հույն իմպերիալիստների պահանջները...»[13]: Ի դեպ, ըստ վրաց հանրության մեջ տարածված տեսակետի, ճիշտ չէր նաև Տրապիզոնը Հայաստանին հատկացնելը, քանի որ այնտեղ հայերը կարող էին հասնել միայն ուրիշի տարածքներ գրավելով[14]: Ուրիշի տարածքներ ասելով նրանք ի նկատի ունեին Էրզրումի նահանգը, որը համարում էին Թուրքիայինը և այդ նահանգի արևմտյան գավառներն (Բաբերդ, Թորթում) ու Կարսի մարզի հյուսիսային և հյուսիս-արևմտյան գավառները (Արդահան, Օլթի), որոնց նկատմամբ վրացիներն իրենք էին հավակնություններ դրսևորում: Ստացվում էր, որ վրացական կողմն ընդհանրապես դեմ էր Հայաստանի դեպի Սև ծով սեփական ելք ունենալուն:

Իսկ ինչ վերաբերվում էր լազերի վրացական ծագմանը, ապա, ըստ գիտության մեջ տարածված տեսակետի, լազերենը համարվում է քարթվելական լեզվաընտանիքի լեզու, ինչպես վրացերենը, մեգրելերենը և սվաներենը: Այս լեզուներից լազերենին ամենամոտ կանգնած է մեգրելերենը: Սակայն այս ժողովուրդների գենետիկ կապը հստակ ապացուցված չէ[15]: Այսինքն՝ վրացիների հավակնությունների ազգագրական ապացույցները հիմնավոր չէին:

---

[13] ՀԱԱ, Ֆ. 275, ց. 5, գ. 217, թ. 28:
[14] Տես նույն տեղում, թ. 27:
[15] Տես www.wikipedia.org.

Ք.ա. 6-րդ դարում Լազիկայում իրենց գաղութներն (Դիոսկուրիադան և Ֆասիսը) են հիմնում հույները: Այդ ժամանակներից մինչև այսօր հույները հանդիսանում են Լազիստանի հիմնական ազգերից մեկը:

Այժմ քնարկենք վրաց պատվիրակության առաջ քաշած մյուս՝ պատմական իրավունքի փաստարկը: Հնագույն ժամանակներից պատմական Լազիկան (Տրապիզոնից մինչև Բաթում՝ Սև ծովի առափնյա տարածքը) մտել է մի շարք պետությունների կազմի մեջ կամ հանդիսացել է ինքնուրույն իշխանություն: Ք.ա. 6–5-րդ դարերում Լազիստանը կազմել է Աքեմենյան Պարսկաստանի մասը, Ք.ա. 4-րդ դարում՝ Կոլխերի թագավորության, Ք.ա. 2-րդ դարի վերջին մտել է Պոնտոսի թագավորության մեջ, իսկ Ք.ա. 1-ին դարում՝ Հռոմեական կայսրության: Տարբեր ժամանակներում Լազիկան ընկել է Հայաստանի (Երվանդականներ, Արտաշեսյաններ) քաղաքական ազդեցության տակ: 3-րդ դարի վերջին առաջացել է Լազիկայի թագավորությունը՝ էգրիսին (Կողքիս (Եգր)): 6-րդ դարի կեսերին Լազիկան կորցնում է անկախությունը՝ 562 թ. նվաճվելով Բյուզանդիայի կողմից: 7-րդ դարի վերջին՝ 697 թ., այն ընկնում է Արաբական խալիֆայության լծի տակ, իսկ 8-րդ դարի վերջին՝ մտնում Աբխազական թագավորության կազմի մեջ, որը կախման մեջ էր գտնվում Բյուզանդական կայսրությունից: 1578 թ. այն գրավում են թուրքերը[16]: 1878 թ. Սան-Ստեֆանոյի պայմանագրով Լազիստանի արևելյան հատվածը՝ Բաթում քաղաքով, անցնում է Ցարական Ռուսաստանին, որտեղից էլ սկսվում է Բաթումի մարզի (Աջարիայի) պատմությունը:

Լազիկայում մեծ քվով հայեր սկսել են հաստատվել 8-րդ դարում, երբ արաբական հալածանքներից խուսափելով 1200 հայ գյուղացի Համամ Ամատունի իշխանի և իր հոր Շապուհի առաջնորդությամբ հիմնավորվում են այս ապահով լեռներում՝ Բյուզանդական կայսրության հովանու ներքո: Նրանց կենտրոնը կոչվում էր Տամբուր, որն ավելի ուշ Համամ իշխանի անունով կոչվում է Համամաշեն կամ Համշեն: Այսպես հիմք է դրվում Համշեն գավառին և

[16] Մանրամասն տես Меликишвили Г. А., К истории древней Грузии, Тбилиси, 1959.

համշենահայության գոյությամբ նաև՝ Հայկական Պոնտոսի պատմությանը: Խաչքար լեռնաշղթայի հովիտների մեջ համշենցիները բազմանում և պահում են իրենց լեզուն ու հավատքը՝ լեռները զարդարելով բազմաթիվ վանքերով և եկեղեցիներով մինչև օսմանցիների ասպատակությունները[17]:

Այսինքն՝ հայերը ևս հնուց ի վեր հանդիսանում են Լազիկայի հիմնական բնակիչներից: Այստեղ որոշ քանակությամբ բնակվում են նաև մահմեդականացված վրացիներ:

Իհարկե, հիմնական բնակչությունը հանդիսանում են լազերը, որոնց ծագումը, ինչպես նշվել է, շատ անորոշ է: Ըստ երևույթին տարբեր ժամանակներում Պոնտական լեռներում հաստատված բնակիչներից ժամանակի ընթացքում ձևավորվել է լազ ժողովուրդը: Ինչպես գրում է Մխիթարյան միաբանության անդամ Հարությունն վարդապետ Պզտիկյանը, «...երբ ամէնքն ալ ճնշուած անտանելի տուրքերու բեռին տակ, կամ վերջնապէս հեռացած են, կամ ալ բռնի իսլամացած: Այս է պարագան Հայերուն, միլիոնը անցնող, որոնցմէ միայն Համշէնն է որ մինչեւ վերջերս պահած էր իր լեզուն: Նոյնն է պարագան Յոյներուն, կիսավայրենի լազերու վերածուած, վրացիները՝ կիւրճի (գյուրջի – Շ. Թ.) կոչուած և հիմա ամէնքն ալ փողկապաւոր «Թուրք» հաւատարիմ քաղաքացիներ դարձած»[18]:

Այս ամենը կասկածելի են դարձնում Վրաստանի հավակնությունները Լազիկայի վրա նաև պատմական իրավունքի տեսանկյունից:

Զ. Ավալովի երրորդ փաստարկը հետևյալն է. Լազիստանի վրա հավակնությունները հիմնավորվում են «վրաց հանրության մեջ տարածված հայացքներով»: Այն ոչ մի քննադատության չի դիմանում: Այստեղ, կարծում ենք, պետք է փիլիսոփայորեն մոտենանք հարցին և ընդունենք, որ հանրության հայացքները, սովորաբար, ավելի մաքսիմալիստական են լինում, քան պատմական իրականությունն է:

Հարկ է նկատել, որ Հայաստանի սահմանները որոշող հանձնաժողովում տեղի ունեցած քննարկումները լակմուսի թղթի նման

---

[17] Տես Պզտիկեան Յ. վրդ., Տայք, Բարձր Հայք: Վրացակա՞ն թե հայկական (ճամբորդական նօթեր), Երևան, 2005, էջ 61–62:
[18] Նույն տեղում, էջ 56:

պարզորոշ ի ցույց դրեցին Հայաստանի դեպի ծով ելքի հարցում անգլո-ֆրանսիական և վրաց-հայկական հակասությունները: Ֆրանսիան խոստացել էր քեմալականներին աջակցել Տրապիզոնի հարցում և հայերին մղում էր Լազիկայով ծովային ելք պահանջելուն, իսկ անգլիացիները ծրագրել էին Լազիկայում՝ ներառյալ Բաթումը, ստեղծել առանձին պետական կազմավորում և աշխատում էին Հայաստանի ծովային ելքի հարցը լուծել Տրապիզոնում: Բաթումի հարցում թե՛ Ֆրանսիան և թե՛ Անգլիան համակարծիք էին՝ Հայաստանը պետք է Բաթումով ելք ունենա դեպի Սև ծով, իսկ նավահանգիստը պետք է ունենա porto-franko կարգավիճակ: Վրաստանն էլ դեմ էր Հայաստանին սեփական ծովային ելքի տրամադրմանը թե՛ Լազիկայում և թե՛ Բաթումում: Սրանք էին պատճառները, որ հայկական պատվիրակության մասնակցությամբ խորհրդակցությունում՝ փետրվարի 21-ին Կամերերի և Վանսիտտարտի նախաձեռնությամբ հիմնականում քննարկվեցին Տրապիզոնի և Լազիկայի խնդիրները, իսկ վրացական պատվիրակության մասնակցությամբ խորհրդակցությունում՝ փետրվարի 25-ին, ակտիվորեն քննարկվեց նաև Բաթումի հարցը:

Ի վերջո, Գերագույն խորհուրդը, ունկնդրելով հանձնաժողովի կարծիքը, փետրվարի 27-ին առաջ քաշեց մի ծրագիր, որտեղ հայ-վրացական սահմանային խնդիրների առաջարկվող լուծումներում նախատեսվում էր Լազիստանը որպես ինքնավար միավոր մտցնել Հայաստանի կազմի մեջ[19]: Այս ծրագիրը համահունչ էր Հայաստանի կառավարության տեսակետին: Ըստ երևույթին, այն կազմելիս հաշվի էին առնվել նաև հայկական կողմի մոտեցումները, որոնք շարադրված էին Բաթումի խնդրի վերաբերյալ ՀՀ կառավարության կողմից ընդունված որոշման մեջ[20]:

Գերագույն խորհրդի վերոնշյալ ծրագրի քննարկման ընթացքում Ֆրանսիայի ներկայացուցիչ Ժյուլ Կամբոնը և Իտալիայի ներկայացուցիչ Իմպերիալին Լազիստանի հարցով մտահոգություն հայտնեցին՝ նշելով, թե ավելի նպատակահարմար է Լազիստանը

---

[19] Տե՛ս Авалов З., Независимость Грузии..., էջ 257:

[20] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 508, թ. 42, նաև՝ Խատիսյան Ա., Հայաստանի Հանրապետության ծագումն ու զարգացումը, Բեյրութ, 1968, էջ 251:

թողնել թուրքական տիրապետության ներքո, պայմանով, որ դեպի ծով տանող ճանապարհների վրա Հայաստանին տրվեն անկապտելի իրավունքներ: Սակայն Քերզոնը նախազգուշացնում է, որ այդ դեպքում Թուրքիան Լազիստանը կօգտագործի որպես հենակետ՝ Բաթումը գրավելու համար: Նա նաև նշում էր, որ Հայաստանը չի խառնվի այդ ինքնավար պետության ներքին գործերին (ինչպես նշված էր հանձնաժողովի զեկույցում՝ Հայաստանի գերիշխանությունը Լազիստանի վրա լինելու էր զուտ անվանական – Շ. Թ.), քանի դեռ երաշխավորվում են ճանապարհների օգտագործումը[21]: Պարզաբանվեց նաև «անվանական գերիշխանություն» հասկացությունը, որը հասկացվում էր որպես Լազիստանում հայկական դրոշի բարձրացման իրավունք, որից հետո ծրագիրն ընդունվեց խորհրդաժողովի կողմից:

Մարտի 1-ին վրացական պատվիրակությունը Գերագույն խորհրդին ներկայացրեց մի նոտա, որտեղ ներկայացված էին նրանց մոտեցումները քննարկված հարցերի վերաբերյալ: Այդ նոտայում վրացական կողմը, մերժելով խորհրդաժողովի ընդունած ծրագիրը, պնդում էր սահմանները Վրաստանի օգտին շտկել՝ Լազիստանի գավառը և Ճորոխի հովտի որոշ հատվածներ Վրաստանին միացնելու միջոցով: Վրացիները նշում էին, որ սահմանների վերոնշյալ ուղղումների հարցը իրենց կողմից հարուցվել է կապված Տրապիզոնի վիլայեթի սահմաններում Հայաստանին Սև ծով ելք տրամադրելու որոշման հետ[22]: Ամեն ինչ պարզ և հստակ էր, ըստ վրացական պատվիրակության տեսակետի, Հայաստանը դեպի Սև ծով սեփական ելք չպետք է ունենա և պետք է հույսը դնի Վրաստանի ողորմածության վրա: Իհարկե, հասկանալի էր վրացական պատվիրակության դիրքորոշումը: Հայաստանը գցելով կոմունիկացիոն կախվածության մեջ, Վրաստանը կկարողանար դյուրացնել Ջավախքի և Լոռու վիճելի խնդիրներն իր օգտին լուծելու հարցը, տարանցիկ փոխադրումներից հսկայական եկամուտներ կստանար և հագուրդ կտար թուրք-ադրբեջանական տանդեմի հայակործան քաղաքականությանը՝ փորձելով դրանից որոշակի

---

[21] Տե՛ս Ованнисян Ричард Г., Международные отношения..., էջ 441:
[22] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 576, թ. 78, նաև՝ Авалов З., Независимость Грузии..., с. 257.

օգուտներ քաղել. Լազիստանի և Բաթումի հարցում Թուրքիայի հնարավոր բարյացակամ վերաբերմունքը, եթե այդ տարածքները մեծ տերությունների որոշմամբ Թուրքիային չէին անցնելու, Բաքվից նավթամթերքների ապահով մատակարարումը, Վրաստանի մուսուլմանների խաղաղեցումը և այլն: Սակայն սա անհեռատես մոտեցում էր, որովհետև Հայաստանը կործանելուց հետո Թուրքիան և Ադրբեջանը անպայման կբզկտեին նաև Վրաստանը: Ասվածն ապացուցեց իրադարձությունների հետագա ընթացքը 1921 թվականին:

Այսպիսով, վրացական պատվիրակության մերժողական դիրքորոշման պատճառով Լոնդոնի խորհրդաժողովում Լազիստանի տարածքով Հայաստանին ծովային ելքի տրամադրման խնդիրը չլուծվեց: Այն տեղափոխվեց 1920 թ. ապրիլի 19–26-ը իտալական Սան-Ռեմո քաղաքում հրավիրված խորհրդաժողովի օրակարգ:

SHIRAK TOROSYAN

ARMENIAN-GEORGIAN DISAGREEMENTS IN THE PROBLEM OF LAZISTAN DURING THE LONDON CONFERENCE

(FEBRUARY–MARCH 1920)

SUMMARY

After the proclamation of independence of the First Republic of Armenia one of the priorities of the foreign policy of the RA was the provision of access to the sea. Lazistan was observed as one of the possible options to resolve this issue around which discussions were held from February 12 to April 10, 1920 during the Supreme Council's conference in London. For the final resolution of the issue and the settlement of Anglo-French contradictions on 17 February, 1920 a Commission for the determination of the borders of Armenia was formed. During the Commission's session on February 21 the Armenian delegates proposed,

among others, the demand for access to the sea at Lazistan, too. During the session on February 25, the Georgian delegates rejected the claim of the Armenians. Finally, on February 27, the Supreme Council, taking into account the opinion of the Commission put forward a project where it was envisaged to include Lazistan as an autonomous unit in Armenia. On March 1 the Georgian delegation sent a note to the Supreme Council with the rejection of the above mentioned project and the issue was moved to the San Remo Conference agenda. The Georgian delegation refused all the versions proposed by Armenia to have own access to the sea.

ШИРАК ТОРОСЯН

АРМЯНО–ГРУЗИНСКИЕ РАЗНОГЛАСИЯ ПО ПРОБЛЕМЕ ЛАЗИСТАНА В ХОДЕ ЛОНДОНСКОЙ КОНФЕРЕНЦИИ

(ФЕВРАЛЬ–МАРТ 1920)

РЕЗЮМЕ

После провозглашения независимости Первой Республики Армения одним из приоритетов внешней политики РА было обеспечение выхода к морю. Лазистан рассматривался в качестве одного из возможных вариантов решения этого вопроса, вокруг которого были проведены переговоры с 12 февраля по 10 апреля 1920 года во время конференции Верховного Совета в Лондоне. Для окончательного решения вопроса и урегулирования англо-французских противоречий 17 февраля 1920 была образована комиссия для определения границ Армении. Во время сессии Комиссии 21 февраля армянские делегаты предложили, в ряду других, требование о предоставлении выхода к морю также через Лазистан. В ходе заседания 25 февраля грузинские делегаты отклонили предложение армян. Наконец, 27 февраля, Верховный Совет, принимая во внимание мнение Комиссии, выдвинул проект, где было предусмотрено включить Лазистан в качестве автономной единицы в состав Армении. 1 марта грузинская делегация направила ноту в Верховный Совет с отказом упомянутого выше проекта, вопрос был перенесен в повестку дня конференции в Сан-Ремо.